



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 07 » _____ 09 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-350

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 6-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 2-ին տեղ-տեղ, 3-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և
ամպրոպ՝ մինչև 1-5 մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը օգոստոսի 31-ին, սեպտեմբերի 1-ին եղել է նորմայից
բարձր 1-2 աստիճանով, սեպտեմբերի 2-5-ին՝ 2-3 աստիճանով, սեպտեմբերի 6-ին՝
4-6 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 6-ին. Արարատյան դաշտում,
Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է +35...+37°C,
Տավուշում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում,
Լոռիում, Սյունիքի նախալեռներում +28...+33 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում գրանցվել է սեպտեմբերի 4-ին.
Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում,
Սյունիքի նախալեռներում՝ +4...+8°C (Մարտունիում՝ 1°C, Աշոցքում՝ +2°C), Տավուշում, Կոտայքի
և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ 10...+15°C:

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի Գյումրիում՝ 10մ/վրկ, պողոթման ժամանակ՝
20/վրկ արագությամբ և Երևանում՝ 8մ/վրկ, պողոթման ժամանակ՝ 16մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ
չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել
1900.67 մ (06.09.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 5 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան